ԱՐՇԱՎԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Արշավի շրջանակներում խաղարկության (այսուհետ՝ Խաղարկության) իրականացման սույն պայմաններով (այսուհետ՝ Պայմաններ) սահմանվում են Խաղարկության անցկացման կարգը, պայմանները, սահմանափակումները:

1.2. Մասնակցելով Խաղարկությանը՝ Դուք հաստատում եք, որ ծանոթացել եք Պայմաններին և համաձայն եք դրանց:

1.3. Խաղարկությունը համարվում է մարքեթինգային միջոցառում:

1.4. Խաղարկությունն իրականացվում է «Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից (այսուհետ՝ Կազմակերպիչ):

1.5. Խաղարկությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության տարածքում:

2. Խաղարկության մասնակիցներ

2.1. Խաղարկությանը կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող, 18 տարին լրացած Ֆիզիկական անձինք:

2.2. Կազմակերպչի աշխատակիցները և նրանց ընտանիքի անդամները չեն կարող մասնակցել Խաղարկությանը:

3. Խաղարկության անցկացման կարգը

3.1. Խաղարկությանը մասնակցելու համար անհրաժեշտ է, 2026 թվականի հոկտեմբերի 21-ից 2026 թվականի նոյեմբերի 30-ը (ներառյալ) ընկած ժամանակահատվածում, ակտիվացնել **Uplay Premium սակագնային պլանը՝ 3**

ամիս ժամկետով, որի շրջանակներում վճարման ենթակա գումարի չափը 9000 ՀՀ դրամի փոխարեն կկազմի 3,990 ՀՀ դրամ[1],

3.1.1. Uplay Premium սակագնային պլանը տվյալ հեռախոսահամարով կարող է ակտիվացվել միայն մեկ անգամ:

3.1.2. Ծառայությանը բաժանորդագրվելուց հետո Կազմակերպչի կողմից SMS հաղորդագրության միջոցով մասնակցի կողմից տրամադրված կոնտակտային հեռախոսահամարին կուղարկվի հնգանիշ կոդ: Նշված SMS հաղորդագրությունն անհրաժեշտ է պահպանել և ներկայացնել համաձայն Պայմանների 3.8 կետի:

3.2. Խաղարկությունը կամփոփվի **2026 թվականի դեկտեմբերի 15-ին**: Խաղարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ տեղեկությունը կտեղադրվի նաև Կազմակերպչի պաշտոնական սոցիալական էջում՝ Uplay_Armenia-ի ինստագրամյան էջով:

3.3. Խաղարկության արդյունքների ամփոփումը տեղի կունենա Կազմակերպչի պաշտոնական սոցիալական էջերում՝ ուղիղ հեռարձակման միջոցով:

3.4. Խաղարկության հաղթողները կընտրվեն պատահականության սկզբունքով՝ Randomizer առցանց հարթակի միջոցով:

3.5. Հաղթողների ընդհանուր թիվը սահմանվում է **200 հոգի**: Հաղթողները կստանան Պայմանների 5.1. կետով նախատեսված նվերներից որևէ մեկը:

3.6. Խաղարկության արդյունքների ամփոփման արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցներին Ucom-ի կողմից կստանան զանգ վերջիններիս հաղթող ճանաչված լինելու, նվերը ստանալու վայրի և ժամանակահատվածի վերաբերյալ:

3.7. Խաղարկության արդյունքների ամփոփման արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցները իրենց նվերները ստանալու համար պետք է անձամբ մոտենան Կազմակերպչի Հյուսիսային պողոտա 1 հասցեում գտնվող վաճառքի և սպասարկման կենտրոն:

[1] Սկցիայի ժամկետի ավարտից հետո ծառայությունները կշարունակվեն մատուցվել՝ ամսական 3000 ՀՀ դրամ արժեքով՝ համաձայն Սակագնային պլանի պայմանների: Եթե չեք ցանկանում շարունակել օգտվել ծառայություններից, ապա ցանկացած պահի կարող եք անջատել բաժանորդագրությունը:

3.8. Հաղթող ճանաչված մասնակիցների կողմից պետք է ներկայացվի հնգանիշ կոդ պարունակող SMS հաղորդագրությունը և անձը հաստատող փաստաթուղթը:

3.9. Հաղթող ճանաչված մասնակիցների կողմից նվերն անձամբ ստանալու անհնարինության դեպքում, նվերը կարող է ստանալ վերջինիս կողմից պատշաճ լիազորված անձը՝ օրենքով սահմանված կարգով տրամադրված լիազորագրով և անձը հաստատող փաստաթղթով:

3.10. Նվերները ենթակա չեն փոխարինման կամ փոխանակման գումարի հետ:

3.11. Կազմակերպչին իրավունք է վերապահվում փոփոխել Խաղարկության Պայմանները՝ հաշվի առնելով ստեղծված իրադարձությունները՝ դրա մասին նախապես տեղեկացնելով իր պաշտոնական կայքէջում և սոցիալական էջերում:

4. Խաղարկության անցկացման ժամկետները

4.1. Խաղարկությունն անց է կացվելու **2026 թվականի հոկտեմբերի 21–ից 2026 թվականի նոյեմբերի 30-ը (ներառյալ)** ընկած ժամանակահատվածում:

4.2. Խաղարկության արդյունքների ամփոփման ժամկետների վերաբերյալ տեղեկությունը կտրամադրվի Պայմանների 3.2-րդ կետով սահմանված կարգով:

5. Նվերների ցանկը

5.1. Նվերների ցանկը հետևյալն է.

Ապրանքատեսակ	**Քանակ (հատ)**
iPhone 17 Pro սմարթֆոն՝ 256 GB ներքին հիշողությամբ	3
Xiaomi Robot Vacuum S20+ (ռոբոտ փոշեկուլ)	2
MacBook Neo Touch ID (դյուրակիր համակարգիչ)	3

Xiaomi Redmi Buds 6 Lite (ականջակալ)	20
Դեպի Մալդիվներ ուղևորության տոմս՝ 2 հոգու համար	1
Կինոդիտման տոմսեր (Kinopark)	50
YerevanMall-ի նվեր քարտ՝ 20,000 ՀՀ դրամ արժողությամբ	100
Ari tanem նվեր քարտ՝ 23,000 ՀՀ դրամ արժողությամբ	10
Ari tanem նվեր քարտ՝ 29,000 ՀՀ դրամ արժողությամբ	10
PlayStation խաղային համակարգ	1

6. Կազմակերպչի տվյալները

«Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերություն,

գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մանանդյան փող., շ. 33/8,

պաշտոնական կայքէջ՝ www.ucom.am

պաշտոնական սոցիալական էջեր՝

https://www.facebook.com/UcomArmenia

https://www.instagram.com/ucom_official

հեռախոսահամար՝ +374 (11) 444 444